ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

քաղաք Երևան «17» փետրվարի, 2020 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 04-Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի փետրվարի 13-ի N 06-Լ հրամանը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Կազմակերպել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցության հայտերի ընտրության մրցույթը:

2. ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ եռօրյա ժամկետում ապահովել մրցույթի հայտարարության հրապարակումը զանգվածային լրատվության հանրապետական միջոցներով և մրցույթի հրավերի փաթեթի տեղադրումը ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի ինտերնետային կայքէջում:

3. ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ Տ. Գալստյան)՝ սահմանված կարգով ապահովել մրցույթի

հայտարարության հրապարակման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրումը:

4. ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի գիտական քաղաքականության վարչությանը (պետ՝ Կ. Ղարիբյան)՝

1) խորհրդատվություն տրամադրել մրցույթի հայտ ներկայացնող գիտահետազոտական խմբերի ղեկավարներին,
2) իրականացնել մրցույթի հայտերի տեխնիկական ստուգումը և կազմակերպել մրցույթին ներկայացված հայտերի գիտական փորձաքննությունը,
3) մրցույթի արդյունքների ամփոփումից հետո գիտական թեմաների ղեկավարներին սահմանված կարգով տեղեկացնել մրցույթի արդյունքների մասին,
4) կազմակերպել մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ղեկավարների հետ պայմանագրերի կնքումը՝ ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Մովսիսյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ